

Tracy m/s 4/1

Dr. Pleni 4/10      Reynolds

Optical 1937

891-710

J-90



Վ. ԺՈՒԿՈՎՍԿԻ

# ԶԻՆԱԿԻՐ ՌՈՒԱՆՄԷ

ՊԵՏՂՎԱՆ 1937  
ՅԵՐԵՂԱՆ

Վ. ԺՈՒԿՈՎՍԿԻ

-6 NOV 2011

891.715  
Ժ-50

# ԶԻՆԱԿԻՐ ՌՈԼԱՆԴ

Թարգմ. Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ

Նկարները Պ. ԱԼՅԱԿԻՆՍԿՈՒ

ՊԵՏՆՐԱՏ

ՀԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԾԲԻ  
ՅԵՐԵՎԱՆ



3364

ԿՐՏՄԵՐ ՏԱՐԻՔԻ ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խմբագիր՝ Հ. Հայրապետյան  
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռեանյան  
Արքագրի՝ Ռ. Նեանյան

Գլավիճի լիազոր Կ—4531, Հրատ. 3935  
Պասվեր 82, սիրում 4000  
Պետհրատի սպարան, Յերեվան, ԻԻ Կնուկյանցի, 4



36724-62



Կարլոս Մեծը մի խնջույք եր սարքել,  
Ճոխ զարդարված եր շքասրահը,  
Շրջում եր արագ գավաթը փոսկե,  
Ճռնչում բեռից հսկա սեղանը:  
Թնդում եր ընտիր խմբերգը ազատ  
Յեվ աղմկում եր մի ուրախ զրույց,  
Հյուրերն ել ուտում, խմում լիառատ,  
Ու վառվում ելին զեմքերը գինուց:

Կարլոս Մեծն ասաց ներկա հյուրերին.  
«Մենք մի գործ ունենք, մի գործ զժվարին:  
Վայել է, արդյոք, մեզ հրճվել այսօր,  
Յերբ մենք Արտասի այն հրաշագոր  
Թանգ թալիսմանին զեռ չենք տիրացել:  
Մի հսկա լե այն մեզնից գողացել,  
Վոր անտառումն է Արգենի մթին,  
Ու զրել իրա հսկա վահանին:

Խիզախ Ուրվներն ու Գվարինը,  
Բավարչան Նալիմն, ուժեղ Գեմոնը,  
Մերլինն ու Միլոնը, կոմսն Ազլանդի,  
Լսելով կանչը մեծ թագավորի,  
Մեղանի կողքից շուտ վեր են կենում  
Յեվ ծանր ու մեծ սրերը վերցնում:  
Նրանց զրանն է փայլում պողպատի,  
Պարում են, դոփում ձիերը մարտի:

Այստեղ Միլոնի պատանի վորդին  
Ռոլանդը ասաց. «Վերցրու, իմ ծնող,  
Յեվ հեռո՞ւ տար ինձ, վոր քո այդ մարտին»  
Լինեմ գինակիր և քեզ ծառայող:  
Քաջության համար՝ լես տարիք չունեմ,  
Թույլ տուր վահանդ, նիզակդ տանեմ,  
Նստած լեռանդուն իմ ձիու վրա,  
Վորպես իշխանի հասարակ ծառա»:

Արդենի անտառ մի ճանապարհով  
Վեց հողի առույզ գլուցազն գնացին:  
Հասան անտառի մեջտեղը խմբով  
Ու լեղբայրաբար լուռ բաժանվեցին:  
Ջահել Ռոլանդը նիզակն ու վահան  
Խոնարհ տանում է իր հոր լեռնից,  
Ել սահման չկա իր ուրախության,  
Խրխնջում է ձին տիրոջ հորդորից:

Շրջում են նրանք անտառի միջին  
Ամբողջ լերեք որ ու լերեք գիշեր:  
Հոգնել են նրանք և բոլորովին  
Ուժից ընկել են ձիերն անվեհեր,  
Բացց չի լերևում անտառում հսկան:  
Չորրորդ որն անա, լերը կեսոր լեղավ,



Ե

Կազնի ծառի տակ, ստվերոտ ու լաչն  
Միլոնը պառկեց ու խոր քուն մտավ:

Ռոլանդն արթուն ե: Տեսավ նա հանկարծ  
Հեռու անտառում մշուշի միջից  
Մի բան փայլակնեց: Յեվ խիստ վախեցած  
Շատ լեղջերուներ փախան չորս կողմից  
Այն ճառագայթից վառ ու կենդանի:  
Յեվ փայլուն լույսով այն թալիսմանի  
Վահանը ձեռին, մի ամպի նման,  
Գալիս է ահա անձոռնի ՚սկան:

Ռոլանդը նայեց լեկվորին հուժկու,  
Յեվ մտածում է. «Ի՞նչ հրաշք էս դու:  
Չորս արթնացնել հիմա քեզ համար  
Ինձ անվայել է և խիստ անհարմար:  
Այստեղ նրա տեղ, քնած է քանի,  
Նիզակն է ամուր ու վահանը լաչն,  
Յեվ սուրը հատու, նժույզը արի,  
Յեվ Ռոլանդ վորդին, իր ճարպիկ ծառան»:

Իսկույն շտապով իր ազդրի վրա  
Չոր ծանր սուրը կախեց նա ահա,  
Առավ իր ձեռը նիզակը լեղկար  
Յեվ ուսի վրա համարձակ ձեռքով  
Ամուր վահանը գցեց նա հարմար:  
Յեվ ահա զինված վահան, նիզակով  
Չի հեծած կամաց, լուռ հեռացավ նա,  
Չլինի հանկարծ հայրը արթնանա:

Արհամարհանքով նայելով նրան,  
Քիթը կնձռոտեց այն հպարտ հսկան.  
«Վորտեղից լեկար, — ասաց, — կաթնակեր»  
Քեզ սաղ չի դալիս քո ձին անվեհեր:

Մի տես՝ քո սուրը լեղկար է քեզնից,  
Յեվ քո վահանը շահել ուսերից  
Մեջքդ շարդելով ահա վայր կընկնի,  
Իսկ քո նիզակը ինձ շատ կսաղի»:

«Լսում եմ՝ խոսքդ հանդուգն է այնքան,  
Տեսնենք գործիցդ ի՞նչ է լեղևում:  
Ծանր է վահանը ուսիս մանկական,  
Բայց պինդ եմ կանգնած նրա լետևում:  
Ճիշտ է՝ սովոր չեմ, բայց ձիս է սովոր,  
Ճիշտ է՝ թուլ եմ լես, բայց սուրս է ուժեղ:  
Դու մի համը տես՝ մենք որինավոր  
Կձառայենք քեզ քո պատվին այստեղ»:

Յեվ թափահարեց մահակը հսկան,  
Վոր շարդի, փշրի տղին անպատկառ,  
Բայց Ռոլանդի ձին հանկարծ լետ թռավ,  
Մահակը մոտից սուրաց ու անցավ:  
Ռոլանդը նետեց նիզակը ուժգին,  
Բայց ծայր ծովեց, նիզակը մնաց  
Հսկայի ծակված վահանի միջին,  
Այն թալիսմանի ուժիցը հաղթված:

Ռոլանդը բռնեց լեղկորդ անգամին  
Իր լեղևու ձեռքով սուրը հայրական,  
Իր սուրն ել ուզեց հանել թշնամին,  
Սուրը սեղմվեց պատյանում սակայն:  
Յեվ զեռ չեր հանել իր սուրը հսկան,  
Ռոլանդը նրա ձախ թևը կարեց  
Ու ցայտեց իսկույն առք շիթը արլան,  
Ձեռքը վահանով մի կողմ շարտվեց:

Յեվ ցավից վռոնաց հսկան առևելի,  
Իր մուգ լեռացող արջունով պատած,

Իր թալիսմանը կորցրեց հրաշալի  
Յեվ առանց պաշտպան մնաց նա հանկարծ:  
Հսկան զեպի իր վահանը վազեց,  
Սահաչն յետևից նրա վոտքերին  
Ռուլանդը ճարպիկ հարված հասցրեց՝  
Նա սև կուլյտի պես գլորվեց գետին:

Հայրական սուրը տղան բարձրացրեց  
Յեվ գլուխն խսկուչն նա մի հարվածով  
Աչն աժգահայի ուսից վայր բերեց,  
Հովտում արշուներ հոսեց փշշալով:  
Ռուլանդը վերցրեց վահանը նրա,  
Յեվ թալիսմանը փայլուն գեղեցիկ,  
«Ութերորդ հրաշքն աշխարհիս վրա»,  
Քանզեց ու հանեց իր ձեռքով ճարպիկ:

Յեվ փայլուն գանձը շորի մեջ պահեց,  
Հետո անտառի գետակի ջրով  
Դեմքից, ձեռքերից, ձիուց, զրահից  
Արշունն ու փոշին լվաց անխռով,  
Ու նորից նստեց նժուլզն ամենի,  
Իր յեկած ճամփով նա հանդարտ գնաց  
Աչն տեղը, վորտեղ իր հայրն եր հիմի,  
Յեվ հորը գտավ գեռևս քնած:

Ռուլանդը պառկեց և իր հոր կողքին  
Խորը քնի մեջ ընկղմվեց շուտով,  
Մինչև Միլոնը, թողած. իր կամքին,  
Արթնացավ հանկարծ իրիկվա մթնով:  
«Վորդյակ իմ, Ռուլանդ, շուտ վեր կաց քնից,  
Տուր սաղավարտս, իմ սուրը տուր ինձ,  
Մթնեղ ե արգեն, մշուշն ե պատել,  
Ելի չենք կարող հսկային գտնել:



Ու ման ե գալիս նա խիտ անտառում  
Յեվ այն հակալին վորոնում նորից,  
Վորդին նիզակն ու վահանն ե տանում,  
Յեղածի մասին չի խոսում վոչինչ:  
Յեվ անա նրանք բացատումն են այն,  
Վորտեղ կատարվեց մենամարտը մեծ,  
Յեվ նրանք տեսան գետակը արցան,  
Դիակն անգլուխ ընկած նրա մեջ:

Նայեց Ռոլանդը և իր աչքերին  
Նա չի հավատում. ինչն ե պատճառը—  
Դիակն ե միայն գետնի լերեսին,  
Իսկ գլուխն ուր ե, ուր ե վահանը,  
Զրահը, սուրը, թևն ու մահակը:  
Միայն պառկած ե տկուր դիակը,  
Կոճղն ե միայն մեռելի հակա,  
Իսկ մնացածի հետքն ել չկա:—

Դիակը գննեց Միլոնը, ասաց.  
«Այս ինչ անճոռնի մի կույտ ե ընկած:  
Ամբողջ աշխարհում այսպիսի հրաշք  
Դեռ մինչև հիմա ինձ չի պատահել:  
Այս ում դիակն ե... Ծիծաղելի՛ հարց.  
Հսկան ե, վոր կա: Ուրիշն ե լեկել  
Ու գիշատիչին խողխողել այսպես...  
Պատիվս ու փառքս քնով անցրի լես»:

Պատուհանից դուրս կառույր նայեց  
Ու մտածում եր. «Սարսափում եմ լես.  
Գյուցազներս ուր են: Պետք ե, վոր հիմի  
Վաղուց նրանցից լուր ունենայի:  
Բայց ինչ, արդյոք դուքս Գեմոնը չի՞ դա:  
Ահա գալիս ե: Նա չե անկասկած:





Նիգակն առջևին պահել ե ահա,  
Բերում ե իր հեա գլուխը կտրած»:

Յեզ գուրս Գեմոնը գայրույթը ղեմքին  
Մոտեցավ ահա, նիգակի ծայրից  
Համր գլուխը վայր գցեց շեմքին,  
Ասաց Կառլոսին. «Ամբողջ ավարից  
Ամենավատը ինձ ընկավ բաժին:  
Այս գանձն ընկած եր անտառի միջին  
Թափառում ելի յերեք որ այնտեղ  
Անգլուխ գտա թշնամուն ահեղ»:

Շուտով Գեմոնի յեակից յեկավ  
Տյուրպինը հոգնած, սփրթնած նիհար:  
«Այն թալիսմանը իմ ձեռքը չընկավ,  
Այս թանգ մասունքը բերի քեզ համար»:  
Տյուրպինն ավարը թամբից իջեցրեց.  
Դա հենց անձուռնի թևն եր հսկայի  
Իր հսկայական թաթմանով հանգերձ,  
Փաթաթված ինչ վոր կտորով լաթի:

Բարկացած, մռայլ Նալիմն ել ահա  
Տյուրպինից հետո յեկավ արշավից,  
Յեզ այն հսկայի մահակն աժդահա  
Կախված եր ձիու թամբի վրայից:  
«Թե թալիսմանը ումն ընկավ բաժին,  
Այդ յես չգիտեմ, սակայն այն հսկան  
Գեանին թողել եր իր մահվան ժամին  
Ինձ ժառանգություն մահակը միայն»:

Յեկավ Ուլիվեր ասպետը վոտքով,  
Մտազբաղ եր նա ու հոգնած սասախի,  
Մեռած հսկայի սրով, զրահով  
Ծանրաբեռնված եր նժուլզն ասպետի,



Ձին սմբակները շարժում եր հազիվ:  
«Սրանք հանեցի մեռելի վրայից:  
Այս հաղթանակից չկա մեծ պատիվ,  
Վոչ մի լուր չուներ մե թալիսմանից»:

Գվարինն ահա յերևաց հեռվում  
Ձեռքին հսկայի վահանն աժդահա:  
Բացականչեցին բոլորը խսկուչն.  
«Յեկավ թալիսման բերողը, ահա»:  
Մոտեցավ Գվարինն և ասաց այսպես.  
«Անտառում գտա այս վահանը լես,  
Բայց իմ հույսերը ի դերև անցան,  
Վահանի վրա չկար թալիսման»:

Վերջապես և կոմս Միլոնը ահա  
Տխուր է, ինքը իրենից դժգոհ:  
Պալատին կամաց մոտենում է նա,  
Գլուխը կախած, սաստիկ մտախոհ:  
Յետևից համեստ Ռոլանդն է գալիս  
Իր հոր նիզակը, վահանը ձեռքին,  
Խիզախ աչքերը վառ փայլ են տալիս,  
Ինչպես ասողերը անամպ գիշերին:

Յեվ նրանք հասան այն պատշգամբին,  
Վորտեղ կառլոսն եր իր ասպետներով  
Սպասում նրանց: Յեվ հոր վահանին,  
Վոսկե ճարմանդը միջից պոկելով,  
Իր թալիսմանը Ռոլանդն ամրացրեց,  
Ապա շտապով վահանը բացեց  
Յեվ ճառագայթը փայլեց հրաշալի,  
Ինչպես սև ամպից լույսը արևի:

Յեվ ամեն կողմից վորոտաց հանկարծ  
Շափահարուժյուն խիստ աղմկալի,

Յեվ կառլոսն այդտեղ. «Կոմս Միլոն — ասաց,  
կատարողն չեղար դու մեր իղձերի՝  
Դու վերագարձրիր թալիսմանն այսօր,  
Դու զող հսկայի պատիժը տվիր:  
Այդ հերոսության համար փառավոր  
Ընդունիր մեզնից շնորհը ընտիր»:

Միլոնը լսեց խոսքերը նրա,  
Աչքերը դարձրեց դեպի իր տղան,  
Յեվ ի՞նչ... Փայլում է վահանի վրա  
Այն թալիսմանը արևի նման:  
«Այ, կտրիճ տղա, վորտեղից վերցրիր»:  
Նա պատասխանեց. «Հայր իմ, ինձ ներիր,  
Վախեցա լես քեզ քնից արթնացնեմ,  
Ինքս դուրս չեկա եմ հսկայի դեմ»:



«Ազգային գրադարան»  
NL0390391



3364